— Լաւ՛, իմացայ, գնացէ՛ք հանզչեցէք, տղա՛ք,— ըսաւ Տիկինը: Եւ երբ ամէնքը գնացին,— տե՛ս, Խոսրով, մարդս հիմա ի՞նչ ընէ. մենք ինչ բանէ որ կը վախէինք, ահա այն կատարուեցաւ, մեր վերջը հիմա ո՞ւր պիտի երթայ՝ աստուած միայն գիտէ: Սա միջոցիս Ապուպելճի տղան էլ մէջտեղ ելնելն միթէ՛ աստուծոյ պատիժն չէ՞: Ես այնչափ աղաչեցի իշխանին, որ խնայէ այդ մարդու կենաց, իրեն ազգակիցն ու արենակիցն էր. բայց կնոջ խօսք ի՞նչ նշանակութիւն ունի, կնոջ խելք ո՛ր բանի կը հասնի. մարդուն արիւնը թափեց անխիղճ, եւ անիրաւութիւն անիրաւութեան վրայ աւելցնելով իմ որդիս Աշոտ՝ հօրը յաջորդելով՝ որբ տղուն ժառանգութիւնը բոլորովին յափշտակեց: Հիմա իմ միտքս շփոթեցաւ. եթէ այդ Գուրգէն երիտասարդ՝ պատերազմի մէջ մեծացած, որ միայն հանդիսատես եղեր է կոտորածին, միթէ՛ արաբին գործիք պիտի չլինի՞ մեզ դէմ: Արդար դաւաճան մը, իրաւարար մատնիչ մը մեզի կը պակսէր, փա՛ռք աստուծոյ, նա էլ գտնուեցաւ:

— Ի՞նչ կ'ըսես, Տիկին, վերջապէս, այդ երիտասարդը Արծրունի արիւն ունի երակաց մէջ. այդպիսի անզգամութիւն չի կրնար ընել:

— Ի՛նչ յիմար խօսք զրուցեցիր, Խոսրով, այդ խօսքը զիս աւելի կը վախցնէ հին յիշատակներ միտքս բերելով: Մեծին Ներսէսի ժամանակակից մատնիչ, ուրացող, դաւաճան Մերուժանը մոռցա՞ր, որ Բագրատունի ասպետին շամփուրով պսակուած սատկեցաւ: Նոյնպէս ուրացող դաւաճան Շաւասպ Արծրունին մոռցա՞ր, որ Մեծին Վարդանայ սուրով սատկեցաւ, եւ գրեթէ մեզ ժամանակակից երրորդ Մերուժանը, որ Մահմեդի կրօնքն ընդունեցաւ եւ կորաւ: Ես Արծրունիներէն իրաւունք ունիմ վախելու. այս Արծրունեաց տուն սովորաբար միջին կարգի մարդ չունի, Խոսրով, կամ լաւ մարդիկ կը բերէ, կամ անօրինաց անօրէն կը բուսցնէ:

Այս խօսքերը երբ զրուցեց Հռիփսիմէ տիկին, ոտք ելաւ. թէպէտ յիսունն անցած՝ բայց դարձեալ իւր գեղեցիկ հասակաւ եւ կենդանի, վսեմ նայուածքով ամէն աչքի ակնածութիւն եւ պատկառանք կը